ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 1393-Ա « 10 » ապրիլի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 1986-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐ ՔՆՆԵԼՈՒ ՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 219^1-րդ հոդվածի 4-րդ մասով, 244^9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Գովազդի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1.1-րդ և 2.1-րդ մասերով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 50-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով.

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 219^1-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով (բացառությամբ Օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված, եթե սույն որոշմամբ այլ բան նախատեսված չէ), 244^9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Գովազդի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1.1-րդ և 2.1-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և որոշումներ ընդունելու Երևանի քաղաքապետի լիազորությունները վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ Արամ Մարտիրոսյանին:

2. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ Արամ Մարտիրոսյանի բացակայության՝ գործուղման, արձակուրդի, հիվանդության և այլ դեպքերում, սույն որոշման 1-ին, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված լիազորությունները վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնի պետ Զավեն Սմբատյանին:

3. Օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և որոշումներ ընդունելու Երևանի քաղաքապետի լիազորությունները, բացառությամբ սույն որոշմամբ նախատեսված դեպքերի, վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանին:

4. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի բացակայության՝ գործուղման, արձակուրդի, հիվանդության և այլ դեպքերում, սույն որոշման 3-րդ և 6-րդ կետերով սահմանված լիազորությունները վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության հասարակական տրանսպորտի կարգավորման բաժնի պետ Հարություն Մելքումյանին:

5. Մինչև 2024 թվականի ապրիլի 15-ը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչությանը մակագրված Օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով կայացված վարչական ակտերի դեմ բերված վարչական բողոքները քննելու և որոշումներ ընդունելու Երևանի քաղաքապետի լիազորությունները վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ Արամ Մարտիրոսյանին:

6. Օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 67-րդ հոդվածով նախատեսված վարչական ակտի վերանայման Երևանի քաղաքապետի լիազորությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ Արամ Մարտիրոսյանին, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանին:

7. Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2022 թվականի մայիսի 30-ի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու ու որոշումներ ընդունելու Երևանի քաղաքապետի լիազորությունները վերապահելու մասին» N 1986-Ա որոշումը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ